ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա, հեռ՝ (011) 90 00 35

« 26 » մարտի, 2026թ. **N 18-457Մդ-26**

«Հետք» էլեկտրոնային թերթի լրագրող
Տիրայր Մուրադյանին
քաղաք Երևան, Փ.Բուզանդի 1/3շ., 8-րդ հարկ

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

2026 թվականի մարտի 18-ին ինձ է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի գրությամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ստացված՝ «Հետք»-ի լրագրող Տիրայր Մուրադյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն հասցեագրված գրությամբ ներկայացված՝ hetq.am կայքում առկա՝ «Անշարժ գույք՝ զբոսայգու դիմաց. ՔՊ-ականների, Էդուարդ Բաբայանի և արտոնյալ գործարարի կապը» վերնագրով 04.03.2026թ. հրապարակումը (այսուհետ՝ Հաղորդում, հղում՝ https://hetq.am/hy/article/180005)՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու նպատակով:

Հաշվի առնելով, որ հաղորդումն, ըստ էության, չի պարունակում այնպիսի տեղեկություն և դրանցով չի փաստվում այնպիսի դեպք կամ գործողության կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով՝ նշված հաղորդման հիման վրա քրեական վարույթ չի նախաձեռնվել:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հաղորդմամբ նկարագրված՝ կասկածներ պարունակող արարքների, այդ թվում՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցանքների

առկայությունը ողջամտորեն կարող է ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգման արդյունքում, ուստի հաղորդման պատճենն ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական իրավասու վարչությանը՝ հանձնարարելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ձեռնարկել անհրաժեշտ ստուգողական գործողություններ, իսկ դրանց արդյունքներով առերևույթ հանցանքի մասին վկայող բավարար փաստեր հայտնաբերելու դեպքում՝ ներկայացնել հանցանքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված պատշաճ հաղորդում:

Քրեական վարույթ չնախաձեռնելու օրինականությունը հաստատվել է հսկող դատախազի՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Արսեն Գևորգյանի կողմից, որպիսի վարութային ակտի պատճենը տրամադրվում է սույն գրությանը կից:

Պարզաբանում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ քննիչի վարութային ակտն, այդ թվում՝ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելն Օրենսգրքով սահմանված կարգով յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել հսկող դատախազին:

Օրենսգրքի 299-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելը դատական բողոքարկման ենթակա մինչդատական ակտ է, որի դեմ բողոքը կարող է ներկայացվել դատարան միայն իրավասու դատախազին բողոքարկելու և նրա կողմից բողոքի չբավարարման դեպքում:

Առդիր՝ 8 թերթ:

Հարգանքով՝

Տնտեսական գործունեության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝ ***Բորյա Չիլինգարյան***

Ս. Գրիգոր
12-155 գ.գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

քաղ.Երևան, Վ. Վաղարշյան 13ա,

N 18-457մ/դ-26
18 – ը մարտի, 2026թ.

Քրեական վարույթ չհարուցելու օրինականությունը հաստատում եմ:
Հ. Գևորգյան 20.03.26թ.

ՀՀ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆ
Մուտք N 118/3509դ
«25» 03 2026թ

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազին

Հարգելի՛ գործընկեր,

2026 թվականի մարտի 18-ին ինձ է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի գրությամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ստացված՝ «Հետք»-ի լրագրող Տիրայր Մուրադյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն հասցեագրված գրությամբ ներկայացված՝ hetq.am կայքում առկա՝ «Անշարժ գույք՝ զբոսայգու դիմաց. ՔՊ-ականների, Էդուարդ Բաբայանի և արտոնյալ գործարարի կապը» վերնագրով 04.03.2026թ. հրապարակումը (այսուհետ՝ Հաղորդում, հղում՝ https://hetq.am/hy/article/180005)՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու նպատակով:

Հրապարակման համաձայն՝ Աբովյան քաղաքում եւ Առինջ գյուղում բազմաբնակարան 3 շենք է կառուցվում: Կառուցապատողը «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ն է, որը 2018թ.-ից հետո է սկսել շինարարությամբ զբաղվել: 2020թ.-ից՝ կառուցապատման ոլորտ մտնելու պահից մինչ օրս ընկերությանն ուղեկցում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները եւ կուսակցության մի քանի ակտիվ դեմքերի մերձավորները:

«Հետքը» պարզել է, որ նշված շենքերի զբաղեցրած հողամասերից մեկը շուկայականից բազմապատիկ ցածր գնով ձեռք է բերվել Առինջ համայնքից, մյուսը Աբովյանի համայնքային զբոսայգու տարածքն է: Շինարարության թույլտվությունները, փոխանակությունները եւ կարևոր այլ փաստաթղթերը ընկերությունը ստացել է «դյուրացված» կարգով: Ընկերության սեփականատիրոջ օգտին որոշումներ են կայացրել նաեւ Աբովյանի ավագանու՝ նրա հետ ընդհանուր շահեր ունեցող անդամները: Վերջնարդյունքում ընկերության կառուցած շենքերում շահեկան պայմաններով բնակելի եւ հասարակական տարածքներ են ձեռք բերել որոշումների կայացման մեջ ներգրավված անձինք եւ նրանց մերձավորները:

Այս պատմության գործող անձինք են ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ նրա մերձավորները, Կոտայքի փոխմարզպետ, ՔՊ-ական Հայկ Մկրտչյանը, Աբովյանի համայնքապետ, Գագիկ Ծառուկյանի թիկնազորի նախկին ղեկավար Էդուարդ Բաբայանը, Աբովյանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրեն Նաիրի Հակոբյանը, «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի սեփականատեր Բաբկեն Հովակիմյանը, Պտղնի համայնքի նախկին ղեկավարի հետ փոխկապակցված եւ փողերի լվացման գործով անցնող Մհեր Բաղդասարովը եւ այլք:

2001թ.-ին հիմնադրված «Առեւտրի տուն Վիկտորիա» ՍՊԸ-ն 2022թ.-ին անվանափոխվել եւ կոչվում է «Միլոն մայնինգ» ՍՊԸ: Նույն թվականից ընկերության միակ փայատերը Բաբկեն Հովակիմյանն է (նախկինում ընկերությունը գրանցված էր Հովակիմյանի մոր անունով): Ընկերությանն է պատկանում Երևան-

Սեւան մայրուղու՝ «ԳԱԻ պոստ» կոչվող տարածքի հարևանությամբ գտնվող շինանյութի մանրամեծածախ վաճառակետը:

2022թ.-ից «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ն սկսել է բազմաբնակարան բնակելի շենքեր կառուցել Աբովյան համայնքի վարչական տարածքում: Երկուսը՝ Աբովյան քաղաքում, մեկը՝ Առինջ գյուղում: Բացի դրանցից՝ ընկերությունն Առինջում կառուցել եւ շահագործման է հանձնել բնակելի տների թաղամասը (13 հատ երկհարկանի թաունհաուսներ): «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրենը Աբովյանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նաիրի Հակոբյանն է:

Բաբկեն Հովակիմյանը 2023թ.-ին հիմնադրել է «Միլոն ռիելթի» ՍՊԸ-ն, որի տնօրենը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի եղբայրն էր՝ Ավետ Կոնջորյանը: Նա ընկերության տնօրենի պաշտոնը թողել է 2026-ի հունվարի 5-ին (դրան նախորդել է «Հետք»-ի՝ «Հայկ Կոնջորյանը առանձնատուն է գնել շուկայականից էականորեն էժան գնով» հրապարակումը):

Առինջի հողերի օտարումը.

Կորոնավիրուսային համավարակի ժամանակ՝ 2020թ. հուլիսին, Կոտայքի այդ ժամանակվա մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը Առինջ գյուղի ավագանուն է ներկայացրել Առինջի համայնքապետի պաշտոնակատարին՝ ՔՊ-ական Հայկ Մկրտչյանին (Առինջն այդ պահին Աբովյան համայնքի կազմում չէր): Պետրոսյանն այդ ժամանակ հայտարարել է, որ Առինջում հիմնական խնդիրներից է հողազավթումը: Հայկ Մկրտչյանի նշանակումից երկու ամիս անց սկսվեց 2020թ.-ի արցախյան պատերազմը: Պատերազմի ավարտից անմիջապես հետո պետական կառավարման ճգնաժամ էր Հայաստանում, պետական եւ համայնքային ինստիտուտները բնականոն չէին գործում: Վարչապետը մի քանի օր ընդհատակում էր: Պատերազմի ավարտից մեկ ամիս հետո՝ դեկտեմբերին, Առինջի ավագանին սկսեց համայնքի մի շարք հողերի օտարումը:

Համայնքային հսկայական հողատարածքներ շուկայականից բազմապատիկ ցածր գներով օտարվեցին եւ վերջնարդյունքում դարձան շինանյութեր ներմուծող եւ վաճառող Բաբկեն Հովակիմյանի սեփականությունը: Այդ հողամասերը գտնվում են Առինջ գյուղի՝ «Առինջ մոլից» դեպի Երևան-Սեւան մայրուղու՝ «ԳԱԻ պոստ» կոչվող տարածքն ընկած հատվածում:

Առինջ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2020թ.-ի դեկտեմբերի 9-ի եւ ավագանու դեկտեմբերի 28-ի որոշումներով նախ օրինականացվել է համայնքային հողում ինքնակամ կառուցված 70 քմ մակերեսով շինությունը, ապա այն, զբաղեցրած 200 քմ հողամասի հետ մեկտեղ, վաճառվել է «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի սեփականատեր Բաբկեն Հովակիմյանի մորը՝ Ցողիկ Համբարձումյանին: Ինքնակամ շինության ու համայնքային հողամասի համար գնորդը վճարել է 1.3 միլիոն դրամ:

Առինջի ավագանու 2020թ.-ի տարեվերջի նույն՝ դեկտեմբերի 28-ի արտահերթ նիստում կայացված որոշմամբ Բաբկեն Հովակիմյանի մորը սեփականաշնորհվել է մոտ 1 հեկտար հողամաս: Ավագանին թույլատրել է համայնքի ղեկավարի պաշտոնակատարին գյուղատնտեսական եւ արտադրական նշանակության համայնքային հողամասերը (0.33 հա եւ 0.66 հա) վաճառել վարձակալին 32.5 միլիոն դրամով: Գյուղատնտեսական հողամասի վաճառքի 1 քմ-ի գինը կազմել է 795 դրամ, իսկ արտադրական հողինը՝ 4524 դրամ:

Ավագանու որոշման մեջ բացակայում է հողամասի՝ նախկինում վարձակալված լինելու մասին որեւէ փաստական տվյալ (համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի որոշումներ եւ այլն): Ընդհանրապես, Առինջի ավագանու՝ մինչեւ 2020 թ.-ի դեկտեմբերի որոշումները հրապարակված չեն Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքում, իսկ Առինջի նախկին համայնքապետարանի կայքն անհասանելի է (մինչև խոշորացումը):

Մոտ 1 հեկտար հողամասը Առինջ համայնքից ձեռք բերելուց օրեր անց Հովակիմյանի մայրն այն նվիրել է որդուն, որն էլ հողամասի մեծ մասը՝ 0.85 հա-ը տարաժամկետ վճարման պայմանագրով օտարել է իր իսկ ընկերությանը՝ «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ին: Պայմանագիրը կնքելիս ՍՊԸ-ի անունից հանդես է եկել Ավետ Կոնջորյանը՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի եղբայրը: 0.85 հա հողամասը «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ին է վաճառվել 541 միլիոն դրամով:

Մինչ հողամասի վաճառքը, Բաբկեն Հովակիմյանը կարողացել է փոխել հողամասի կատեգորիան: Արտադրական եւ գյուղատնտեսական նշանակության հողամասերը բնակելի կառուցապատման հողամաս են դարձել արդեն Աբովյան համայնքի ավագանու որոշմամբ, քանի որ 2021թ.-ին Առինջ համայնքն այլ համայնքների հետ միասին խոշորացել եւ միացել է Աբովյան քաղաքին՝ դառնալով Աբովյան համայնքի Առինջ բնակավայր: Հողերի կատեգորիայի փոփոխման համար Հովակիմյանն Աբովյան համայնքի բյուջե է վճարել 31 միլիոն դրամ: Ստացվում է, որ Առինջ համայնքից 1.3 եւ 32.5 միլիոն դրամով գնված, ապա 31 միլիոն դրամով կատեգորիաները փոխած հողամասերը «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ին վաճառվել են 541 միլիոն դրամով՝ ավելի քան 1 միլիոն դոլարով:

Մոտ 1 հեկտար հողամասի մի հատվածի վրա կառուցվել է 13 հատ երկհարկանի թաունհաուս (մի քանիսի կառուցումը նոր է սկսվել), իսկ մյուս՝ ավելի մեծ հատվածի վրա ավարտին է մոտենում բազմաբնակարան շենքի կառուցումը:

Բացի նշված հողամասերից՝ Բաբկեն Հովակիմյանի ընտանիքի անդամները կարողացել են այլ հողամասեր էլ սեփականաշնորհել նույն՝ Առինջ համայնքում: Բոլորը ձեռք են բերվել Առինջ համայնքի ղեկավարի պաշտոնակատար, ՔՊ-ական Հայկ Մկրտչյանի պաշտոնավարման ժամանակ: Դրանց թվում է Բաբկեն Հովակիմյանին փաստացի պատկանած շինանյութի վաճառակետի ավելի քան 7000 քմ հողամասը, որի մի մասի վրա գտնվող ինքնակամ շինությունները օրինականացվել են (որոշում 1, 2) կրկին Հայկ Մկրտչյանի պաշտոնավարման ժամանակ, Առինջի ավագանու որոշմամբ: Հովակիմյանի ազգականի (Անահիտ Բաբկենի Հովակիմյանի) սեփականության իրավունքն է գրանցվել թաունհաուսների եւ բազմաբնակարան շենքի անմիջական հարևանությամբ գտնվող 9539 քմ մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:

Հայկ Մկրտչյանի մասին «Հետքը» գրել է նախորդ տարի: 2023 թվականի սեպտեմբերին՝ Երևանի ավագանու ընտրությունների քարոզարշավի ժամանակ Նիկոլ Փաշինյանը «Քաղաքացիական պայմանագրի» ֆեյսբուքյան փակ խմբում գրառում է արել խնդրելով ապահովել քարոզարշավն ամփոփող հանարահավաքի բազմամարդությունը: Հայկ Մկրտչյանը այդ գրառման մեկնաբանություններում խոստացել է 25-30 մարդ ապահովել:

Աբովյանի զբոսայգու մի մասը եւս օտարվել է.

«Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի սեփականատեր Բաբկեն Հովակիմյանը կարողացել է միավորել ՔՊ-ականներին եւ Աբովյանի ԲՀԿ-ական համայնքապետ Էդուարդ Բաբայանին: Աբովյանի ավագանու 2021թ.-ի ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիրը» պարտվեց խոշոր գործարար Գագիկ Ծառուկյանի «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը: Ընտրության օրը Շրջակա միջավայրի նախարար, Կոտայքի նախկին մարզպետ, ՔՊ Աբովյանի տարածքային կառույցի անդամ Ռոմանոս Պետրոսյանը լրագրողների հետ ճեպազրույցում գրեթե բացառել էր ԲՀԿ-ի հետ հետընտրական համագործակցությունը: Ընտրություններից հետո ՔՊ-ն եւ ԲՀԿ-ն պաշտոնապես չեն համագործակցում, սակայն յուրահատուկ եւ ամուր բիզնես համագործակցություն է հաստատվել այդ ուժերը ներկայացնող անձանց միջեւ: Համագործակցության առարկան Աբովյանի համայնքային հողերն են, այդ թվում՝ Աբովյանի զբոսայգու մի մասը:

Աբովյանի համայնքապետարանի շենքից 500 մետր հեռավորության վրա՝ Բարեկամության հրապարակ 5/1 հասցեում, ընթանում է «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող եւս մեկ բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարություն: Արբանյակից արված լուսանկարները ցույց են տալիս, որ շինհրապարակի տեղում տարիներ առաջ զբոսայգի է եղել: 6300 քմ մակերեսով հողամասում երեւում են ծառերը եւ ճեմուղիները: Տարիներ հետո ծառերի մի մասը չորացել է, տարածքն անխնամ է դարձել: Աբովյան համայնքի սեփականությունը հանդիսացած հողամասը երկու առանձին մասերով սեփականաշնորհվել է 2012 եւ 2016 թթ.-երին (2012 թ.-ին Աբովյանի քաղաքապետը Գագիկ Ծառուկյանի փեսան էր՝ Կարապետ Գուլոյանը): Մի մասը գնել է Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի մայրը, մյուս մասը՝ կինը: 2012 թվականին օտարված 4216 քմ հողամասի համար համայնքին վճարվել է 10 մլն դրամ, իսկ 2016 թվականին 2084 քմ-ի համար 4.9 մլն դրամ: 2021 թ.-ին հողամասերը միավորվել են եւ 2023 թ.-ին 770 միլիոն դրամով վաճառվել «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ին: Աբովյանի համայնքապետ Էդուարդ Բաբայանից ընկերությունը հետագայում նշված հողամասում բազմաբնակարան բնակելի համալիր կառուցելու շինթույլտվություն է ստացել, որից հետո տարածքի ծառերը հատվել են:

Հետագայում Էդուարդ Բաբայանի մայրը՝ Լյուբա Բաբայանը, դարձել է «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի սեփականատիրոջ կողմից Աբովյանի Օգոստոսի 23 փողոցում կառուցված շենքում ընդհանուր 1817 քմ մակերեսով հասարակական տարածքի սեփականատեր: Հնարավոր է՝ «զբոսայգու հողատարածքը՝ հասարակական տարածքի դիմաց» գործարք է կնքվել: Նմանատիպ գործարքները կոռուպցիոն ռիսկ են պարունակում:

Հակակոռուպցիոն կոմիտեում միայն 2025թ.-ին են սկսել մի քրեական վարույթի նախաքննություն, որի շրջանակում պարզվել է, թե ինչպես են կեղծ աճուրդներով Էդուարդ Բաբայանը եւ նրա ընտանիքի անդամները սեփականաշնորհել Աբովյանի համայնքային հողերը: Ավելին, քրեական վարույթով հաստատված մի քանի հանգամանքով Հակակոռուպցիոն դատարանում դատախազության պահանջով ընթանում են այդ հողերը համայնքին վերադարձնելու դատավարություններ: Այդուհանդերձ, Աբովյան համայնքի Բարեկամության հրապարակ 5/1 հասցեի հողամասը համայնքին վերադարձնելու նպատակով Գլխավոր դատախազությունը հայց չի ներկայացրել դատարան, իսկ քրեական վարույթով մեղադրյալ չկա: Դատախազությունից գրավոր հարցմանն ի պատասխան հայտնել են, որ Էդուարդ Բաբայանը նշված

քրեական վարույթում դատավարական կարգավիճակ չունի, սակայն հողամասի սեփականաշնորհման վերաբերյալ դատախազությունում ուսումնասիրություն է իրականացվում:

Աբովյանի համայնքապետ Էդուարդ Բաբայանը գրավոր հարցմանն ի պատասխան հայտնել է, որ Բարեկամության 5/1 հասցեի հողամասը ինչպես Կառավարության 2007թ.-ի, այնպես էլ Աբովյանի ավագանու 2024թ.-ի որոշումներով ներառված չի եղել Հողային օրենսգրքի 60 հոդվածի (չօտարվող) հողերի ցանկում: Մինչդեռ Աբովյանի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին Կառավարության 2007թ.-ի որոշման 1-ին հավելվածում հստակ երևում է, որ 2012 եւ 2016 թվականներին Բաբայանի ընտանիքի անդամների գնած հողամասը ներառված է եղել զբոսայգիների ցանկում: Այդ հողամասը եւ Աբովյանի կենտրոնական զբոսայգին առանձնացված են նույն նշումով: Այսինքն՝ զբոսայգին արգելվում է որևէ դեպքում սեփականության իրավունքով վաճառել, բայց Բաբայանի ընտանիքի անդամները կարողացել են այն գնել:

Շահերի բախում.

«Միլոն մայնինգ» ՍՊԸ-ն Աբովյան քաղաքում եւս մեկ շենք է կառուցում: Այն գտնվում է Օգոստոսի 23 փողոցում: Աբովյանի ավագանին 2022 թ.-ի դեկտեմբերին որոշել է «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի սեփականատիրոջը՝ Բաբկեն Հովակիմյանին, օտարել համայնքային երկու հողակտորներ՝ 227.4 և 136.9 քմ մակերեսներով (ուղղակի վաճառք՝ ընդլայնման նպատակով): Այս որոշմանը կողմ է քվեարկել Աբովյանի ավագանու 23 անդամ, այդ թվում՝ Էդուարդ Բաբայանը եւ ՔՊ խմբակցության անդամ Նաիրի Հակոբյանը, որը «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրենն է:

Աբովյանի ավագանու անդամներ Էդուարդ Բաբայանն ու Նաիրի Հակոբյանը կողմ են քվեարկել նաեւ Բաբկեն Հովակիմյանին պատկանող՝ Առինջի շինանյութի վաճառակետի երկու հողամասի գործառնական նշանակությունը փոխելու որոշումներին (1,2): Շինանյութի տարածքի հողամասը գյուղատնտեսական նշանակություն ունի, որը սեփականաշնորհվել է կրկին կասկածելի հանգամանքներում: Տարածքի սեփականատեր Բաբկեն Հովակիմյանը ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով 2023թ.-ին Աբովյանի համայնքապետարանից նախագծման թույլտվություններ (1,2) է ստացել: Արբանյակային լուսանկարների եւ տարածքում մեր նկարահանած կադրերի համադրությամբ տեսնում ենք, որ Բաբկեն Հովակիմյանի սեփականաշնորհած գյուղատնտեսական հողամասում կառուցվել են մետաղական կոնստրուկցիաներով եւ բետոնե հիմքով ծածկեր՝ շինանյութերը (տախտակներ եւ այլն) բաց երկնքի տակ չթողնելու նպատակով: Ի դեպ, ապօրինի շինարարության նկատմամբ վերահսկողությունը, այդ թվում՝ կասեցումը, տվյալ տարածքում վերապահված է Աբովյանի համայնքապետարանին: Համայնքապետարանի կայքում նշված տարածքում շինարարություն իրականացնելու թույլտվություն առկա չէ: 2026թ.-ի փետրվարի դրությամբ շինանյութի վաճառակետի տարածքում շահագործվում է վերամբարձ կռունկ (Առանձին ուսումնասիրության թեմա է արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող վերամբարձ կռունկի շահագործման թույլտվությունների առկայությունը եւ փորձաքննությունները):

Թույլտվությունները եւ փորձաքննությունները՝ «արագացված» կարգով.

Հայաստանում խոշոր քաղաքաշինական ծրագրերն արագ չեն իրականացվում: Կառուցապատողները շինթույլտվություններն ու անհրաժեշտ փորձաքննությունները ստանալու համար, սովորաբար, երկար են սպասում: Օրինակ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կամ պետական համալիր փորձաքննության դրական եզրակացություններն ամենաժամանակատարներն են: «Միլոն մայնինգ» ընկերությունը նման խնդրի չի բախվել, երկու փորձաքննությունն էլ ստացել է կարճ ժամանակում: Իսկ համայնքի ղեկավարի կողմից տրվող նախագծման եւ շինարարության թույլտվությունները, ավարտական ակտերի որոշումները ստացել է հաշված օրերի ընթացքում: Նման բազմաթիվ թույլտվությունների վերաբերյալ մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք սովորաբար տևում են ամիսներ (որոշ դեպքերում մեկ տարուց ավել): Իրավունք վերապահող նման փաստաթղթերի արագ ստացումը կարող է քաղաքաշինական, տեխնիկական անվտանգության եւ այլ կարևոր նորմերը շրջանցելու ռիսկեր պարունակել:

«Միլոն Մայնինգ» ընկերությունը Առինջի Բ թաղամաս 1-ին փողոց 7 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նպատակով նախագծման 2 թույլտվություն է ստացել Աբովյանի համայնքապետ Էդուարդ Բաբայանից: Առաջինը՝ 2022թ.-ի նոյեմբերին, երկրորդը՝ 2023թ.-ի ապրիլին: Առաջին թույլտվությամբ կառուցապատման եւ կանաչապատման տոկոսները նշվել են «ըստ նորմերի», երկրորդում՝ 60/40: Նախագծման երկու թույլտվությամբ էլ կառուցապատողը պարտավոր է եղել կազմվելիք նախագիծը համաձայնեցնել ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (գազ, ջուր, հոսանք) հետ: 21.03.2023թ.-ին Առինջ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կազմակերպվել է համալիրի նախագծի բնապահպանական առաջին հանրային քննարկումը: Դրան մասնակցել են նաեւ Աբովյան համայնքի ավագանու ՔՊ խմբակցության անդամ, «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրեն Նաիրի Հակոբյանը, նրա ազգականները: Ի դեպ, քննարկմանը մասնակցած Աբովյան համայնքի ղեկավարի օգնական Դիանա Երեմյանը չի ստորագրել արձանագրության տակ՝ նշելով, որ Աբովյանի

համայնքապետարանի դիրքորոշումը կներկայացվի սահմանված կարգով: Բայց համայնքապետարանի դիրքորոշումն այդպես էլ չի ներկայացվել: Համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանը մեր գրավոր հարցմանն ի պատասխան հայտնել է, որ կազմված արձանագրությունում Առինջ բնակավայրի վարչական ղեկավարի ստորագրությամբ հայտնվել է համայնքապետարանի դրական կարծիքը:

Երկրորդ հանրային լսումը, որին քննարկվել է նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, տեղի է ունեցել 2.5 ամիս անց՝ 14.06.2023թ.-ին: Ըստ այդ լսման արձանագրության, քննարկման ժամանակ «մասնագետ» նշումով անձը կառուցապատողին հարցրել է. «Նախնական գնահատման հայտում նշված է, որ գազամատակարարման եւ էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանների համար դիմել եք»: Ի պատասխան՝ նշվել է. «Կոտայքի մարզում ձեւաչափն այսպես է՝ գազամատակարարման եւ էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանները տրամադրվում են շինարարության թույլտվության առկայության դեպքում»: Մինչդեռ Աբովյան համայնքի ղեկավարի տված նախագծման թույլտվության մեջ հստակ գրված է. «Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ»: Երկրորդ հանրային լսմանը եւս բնակիչների կողմից «կողմնակի» հարցեր չեն հնչել, մասնակիցների թվում կրկին եղել են կառուցապատողի հետ կապ ունեցող անձինք: Այս հանրային լսումն էլ է համարվել կայացած, բոլոր շահագրգիռ կողմերը տվել են իրենց համաձայնությունը: Դրանից 13 օր անց Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը հաստատել է համալիրի բնապահպանական փորձաքննության դրական եզրակացությունը: Այսինքն՝ ընդամենը 3 ամսում «Միլոն մայնինգ» ընկերությունը կարողացել է ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը:

«Միլոն մայնինգ» ընկերությունը հեշտությամբ ստացել է նաեւ քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացությունը: Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի գլխավորած պետական համալիր փորձաքննական հանձնաժողովը 2023թ.-ի հուլիսին քննարկման ներկայացված նախագծի վերաբերյալ 14.08.2023թ.-ին դրական եզրակացություն է տվել: Ուսումնասիրելով եզրակացության հիմքերը՝ տեսնում ենք, որ հանձնաժողովի անդամները (մի շարք նախարարություններից) հաշված օրերի ընթացքում մի քանի դիրքորոշում են հայտնել: Օրինակ՝ ՆԳՆ-ն 07.07.2023-ին դեմ է արտահայտվել, քանի որ համալիրի վերելակների եւ կոունկների աշխատանքային փաստաթղթերը փորձաքննված չեն եղել, շենքի նկուղային հարկերի ապաստարաններում սանհանգույցներ նախագծված չեն եղել: Բայց մի քանի օր անց՝ 12.07.2023-ին ՆԳՆ-ն փոխել է իր կարծիքը եւ կողմ է արտահայտվել (պարզ չէ՝ փաստաթղթերն այդ ընթացքում փորձաքննվե՞լ են, նախագծում լրացու՞մ է արվել, թե՞ ոչ): ՏԿԵ նախարարությունը նույնպես կողմ է քվեարկել նախագծին, սակայն նշել, որ պետք է հաշվի առնել «Գազպրոմ Արմենիայի» եւ ՀԷՑ-ի նկատառումները: Աբովյանի համայնքապետարանի՝ մեզ տրամադրած՝ փաստաթղթերում բացակայում էին ենթակառուցվածքների (գազ, ջուր, հոսանք) սեփականատերերի համաձայնությունները:

Բայց այս ամենը չի խանգարել Արմեն Ղուլարյանի ղեկավարած փորձաքննական հանձնաժողովին դրական եզրակացություն տալ նախագծին, իսկ Աբովյանի համայնքապետին՝ շինարարության թույլտվություն:

Բացի բարդ փորձաքննություններն արագ ստանալուց, Բաբկեն Հովակիմյանին հաջողվել է կարճ ժամկետներում, նույնիսկ՝ հաշված օրերի ընթացքում ստանալ թույլտվություններ, ավարտական ակտեր եւ համայնքի ղեկավարի կողմից տրվող այլ որոշումներ: Օրինակ՝ Աբովյանի Օգոստոսի 23 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի շինթույլտվության համար Հովակիմյանը համայնքապետարան է դիմել օգոստոսի 4-ին, թույլտվությունը ստացել է սեպտեմբերի 6-ին: Մեկ շաբաթում ստացել է մեկ այլ շինարարության ավարտական ակտ (ի դեպ, փաստաթղթերը համայնքապետարան է մուտքագրել ավագանու ՔՊ-ական անդամ Նաիրի Հակոբյանը): Մեկ այլ դեպքում էլ կառուցված բնակելի տան շահագործման թույլտվությունը ստացել են դիմումը համայնքապետարան ներկայացնելու նույն օրը: Նմանատիպ օրինակները բազմաթիվ են:

Ովքեր բնակարաններ եւ տարածքներ ունեն «Միլոն մայնինգ»-ի շենքերում.

Առինջում «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի կառուցած թաղամասում ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի՝ մատչելի պայմաններով ձեռք բերած տան (թաունհաուս) մասին 2025թ.-ի դեկտեմբերին ենք գրել: Հայկ Կոնջորյանը թաունհաուսը գնել էր շուկայականից եւ կառուցապատողի հայտարարած գնից էժան՝ 1 քմ-ն ընդամենը 300 հազար դրամով (վաճառքի գինը՝ 1 քմ-ն 420.000): Պարզվում է՝ այս կառուցապատողից բնակարան են գնել նաեւ Հայկ Կոնջորյանի մայրը եւ քույրը՝ Արմինե Կոնջորյանը եւ Օֆելյա Կոնջորյանը: Նրանց ձեռք բերած բնակարանը գտնվում է Հայկ Կոնջորյանի թաունհաուսի դեմ դիմաց կառուցված շենքում: Երեք սենյականոց բնակարանի մակերեսը 81 քմ է (մայրը եւ քույրը համասեփականատեր են):

Հայկ Կոնջորյանի 180 քմ մակերեսով թաունհաուսի հարևանությամբ թաունհաուս է ձեռք բերել նաեւ Աբովյանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրեն Նաիրի Հակոբյանը: Հակոբյանի կինը՝ Անուշ Բեժանյանը, 118 քմ մակերեսով բնակարան է ձեռք

բերել Աբովյանի Բարեկամության հրապարակ 5/1 հասցեում կառուցվող շենքում: Այս շենքը կառուցվել է Աբովյանի զբոսայգու մի հատվածում, որը սեփականաշնորհել էին Էդուարդ Բաբայանի ընտանիքի անդամները եւ հետագայում օգտարել «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ին:

Կոտայքի մարզպետի տեղակալ, Առինջի համայնքապետի նախկին պաշտոնակատար, ՔՊ-ական Հայկ Մկրտչյանն էլ բնակարան է ձեռք բերել Աբովյանի Օգոստոսի 23 փողոցում կառուցված շենքում (Բաբկեն Հովակիմյանի կառուցած): 80.8 քմ մակերեսով բնակարանի արժեքը 31 մլն դրամ է: Այն գնելու համար փոխմարզպետը 20 մլն դրամ վարկ է վերցրել: Մեր գրավոր հարցմանն ի պատասխան Մկրտչյանը տեղեկացրել է, որ բնակարանի արժեքի մյուս մասը՝ 11 մլն դրամը վճարել է որպես կանխավճար (իր միջոցներից):

Աբովյանի համայնքապետ, ԲՀԿ-ական Էդուարդ Բաբայանի մայրը՝ Լյուբա Բաբայանը, դարձել է Աբովյանի Օգոստոսի 23 հասցեի շենքում (Բաբկեն Հովակիմյանի կառուցած) հասարակական տարածքների սեփականատեր: Լյուբա Բաբայանի անունով գրանցված են 887 եւ 930 քմ (ընդհանուր՝ 1817 քմ) մակերեսով տարածքներ: Հիշեցնենք, որ Էդուարդ Բաբայանի մայրն ու կինը մինչ այդ «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ին էին վաճառել Աբովյանի զբուսայգու տարածքից կասկածելի հանգամանքներում սեփականաշնորհված 6300 քմ հողամասը:

Պտղնիի (2021-ից ներառված է Աբովյան խոշորացված համայնքի կազմում) նախկին համայնքապետի հետ կապված գործարար Մեր Բաղդասարովը եւ նրա կինը «Միլոն մայնինգի» եւ Բաբկեն Հովակիմյանի կառուցած շենքերում ունեն 16 անշարժ գույք (40-ից մինչեւ 121 քմ մակերեսներով բնակարաններ): Պտղնի համայնքի նախկին ղեկավար Առաքել Վիրաբյանը մեղադրվում է համայնքային բազմաթիվ հողեր կեղծ աճուրդներով վաճառելու եւ փողերի լվացման մեջ:

Հակակոռուպցիոն դատարանում Պտղնի համայնքի նախկին ղեկավարին եւ նրա հետ կապ ունեցող մի խումբ անձանց (այդ թվում՝ ընտանիքի անդամների) վերաբերյալ երկու գործ է քննվում: 2025 թ.-ի օգոստոսին դատարան ուղարկված գործով նախկին համայնքապետ Առաքել Վիրաբյանը եւ նրա հետ փոխկապակցված անձինք մեղադրվում են մի քանի հանցագործության մեջ (պետական գույքի հափշտակություն, փողերի լվացում): 2025թ.-ի դեկտեմբերին դատարան ուղարկված գործով միայն Առաքել Վիրաբյանն ու Քրիստինե Ասատրյանն (Մեր Բաղդասարովի կինը) են ամբաստանյալի կարգավիճակում (պաշտոնական կեղծիք կատարելու եւ դրան օժանդակելու համար): Դատական գործերի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Քրիստինե Ասատրյանը եւ Պտղնի համայնքի նախկին ղեկավար, 78-ամյա Առաքել Վիրաբյանը խնամական կապ ունեն:

Պտղնի համայնքի կազմակերպած աճուրդներում շուկայականից անհամեմատ ցածր գնով մի քանի անգամ հողամասեր է գնել նաեւ Մեր Բաղդասարովը, որոնցից մեկը հետագայում փոխանակել է կնոջը՝ Քրիստինե Ասատրյանին պատկանող՝ Երեւանի կենտրոնում գտնվող բնակարանի հետ: Մեր Բաղդասարովի ձեռք բերած մեկ այլ հողամաս գնել է «Միլոն մայնինգ» ընկերության սեփականատեր Բաբկեն Հովակիմյանը՝ 200 մլն դրամով (տարաժամկետ վճարման պայմանով): Գլխավոր դատախազությունը դատարանում վիճարկում է Մեր Բաղդասարովի եւ Քրիստինե Ասատրյանի միջեւ կնքված պայմանագիրը՝ փորձելով հողամասը վերադարձնել համայնքին: Այս ընթացքում Բաբկեն Հովակիմյանը փորձում է վաճառել իր գնած հողատարածքը:

Պարզաբանումների համար դիմել ենք Էդուարդ Բաբայանին, Հայկ Մկրտչյանին, Բաբկեն Հովակիմյանին և Նաիրի Հակոբյանին: Ստացել ենք նրանց պատասխանները: Աբովյանի զբոսայգու տարածքի սեփականաշնորհման վերաբերյալ Աբովյան համայնքի ղեկավարի պարզաբանումն իրականությանը չի համապատասխանում: Բաբայանի մեկնաբանությունների մյուս մասը մեջբերումներ են տարբեր իրավական ակտերից:

Կոտայքի մարզպետի տեղակալ Հայկ Մկրտչյանն էլ հայտնել է, որ Առինջ համայնքը ղեկավարելիս գործել է իր լիազորությունների սահմաններում: «Առինջ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնավարման ընթացքում հողամասերի օտարման, ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացները, ինչպես նաև ինձ վերապահված լիազորությունները իրականացվել են բացառապես օրենսդրությամբ սահմանված կարգով և սահմանված պահանջներին համապատասխան»,- գրավոր պատասխանում նշել է Հայկ Մկրտչյանը:

Աբովյանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նաիրի Հակոբյանն էլ պարզաբանել է, որ «Միլոն մայնինգ» ընկերությունում աշխատում է 2016թ.-ից (մինչդեռ 2021թ.-ին ԿԸՀ-ում ներկայացել է որպես Նաիրի Հակոբյան ԱՁ-ի տնօրեն, ԿԿՀ ներկայացրած հայտարարագրում եւս ՍՊԸ-ում աշխատելու մասին չի հիշատակել), իսկ ավագանու անդամ է դարձել 2021 թ.-ին: Ըստ նրա, որևէ կերպ չի միջամտել եւ չի միջամտում համայնքապետարանի աշխատանքին: «Որպես «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրեն, տարբեր կառույցներում ներկայացնում եմ ընկերությունը եւ հանդես եմ գալիս վերջինիս անունից»,- նշել է Հակոբյանը՝ հավելելով, որ Աբովյանի համայնքապետարան դիմող յուրաքանչյուր ոք

օրենքով սահմանված կարգով է սպանում այս կամ այն թույլտվությունը: Նաիրի Հակոբյանը տեղեկացրել է, որ «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի կառուցած թաունհաուսը վարկով է գնել, իսկ նույն ընկերության կառուցած բազմաբնակարան շենքում 101 քմ մակերեսով բնակարանն իր կինը ձեռք է բերել տարաժամկետ վճարման պայմանով: Բաբկեն Հովակիմյանին համայնքային հող օտարելու՝ Աբովյանի ավագանու որոշումներին կողմ քվեարկելու վերաբերյալ մեր հարցին Նաիրի Հակոբյանը պատասխանել է, որ համայնքապետարանի աշխատակազմը հարցը ավագանու նիստին ներկայացնուց առաջ ստուգումներ է արել, իսկ ինքը գործել է բարեխղճորեն (թե ինչպես է դրսևորվել իր բարեխղճությունը, Հակոբյանը չի հայտնել):

«Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի սեփականատեր Բաբկեն Հովակիմյանը, անդրադառնալով Առինջի հողերի ձեռքբերմանը, հայտնել է, որ դրանք իր ընտանիքը 1990-ականներից է գյուղատնտեսական նպատակով օգտագործել, որից հետո գնման նախապատվության իրավունքով վաճառվել են իրենց՝ կառավարային արժեքից բարձր գնով: Ինչպե՞ս է ստացվել, որ 1.3 եւ 32.5 միլիոն դրամով գնված, ապա 31 միլիոն դրամով կատեգորիաները փոխած հողամասերը «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ին վաճառվել են 541 միլիոն դրամով: Այս հարցին ի պատասխան՝ Բաբկեն Հովակիմյանն ասել է, թե գործարքի համար «հիմք է հանդիսացել տվյալ պահին ձևավորված շուկայական արժեքը»: Հովակիմյանը չի արձագանքել Աբովյանի զբոսայգու տարածքի ձեռքբերման փաստին: Անդրադառնալով իրենց կառուցած տները եւ շենքերի բնակարանները ցածր գներով օտարելուն, Բաբկեն Հովակիմյանը հայտնել է, որ անհրաժեշտության դեպքում, կախված գործարքների առանձնահատկություններից, դրանք կարող են վաճառվել զեղչով: Կառուցապատմանը նախորդած փորձաքննությունների վերաբերյալ մեր հարցերն առաջարկել է ուղղել պետական և համայնքային կառույցներին: Բաբկեն Հովակիմյանը տեղեկացրել է նաև, որ ԱԺ պատգամավոր Հայկ Կոնջորյանի եղբայրը 2025թ.-ին իր որոշմամբ է ազատվել «Միլոն ռիելթի» ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնից:

Քննարկելով ներկայացված հաղորդումը՝ հարկ է արձանագրել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ քրեական վարույթի նախաձեռնման իրավահարաբերությունները կանոնակարգող իրավանորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը բազմիցս և հետևողականորեն գործածում է **«հանցանքի մասին պատշաճ հաղորդում»** ձևակերպումը, ինչից ենթադրելի է, որ վերջինս քրեական վարույթ նախաձեռնելու առիթ է համարում բացառապես պատշաճ հաղորդումը:

Հաղորդման պատշաճության պահանջը վերաբերում է ինչպես դրա ձևին, այնպես էլ՝ բովանդակությանը: Մասնավորապես՝ բովանդակության տեսանկյունից հաղորդումը պատշաճ է, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: Այլ խոսքով՝ քրեական վարույթ նախաձեռնելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցանքի մասին պատշաճ հաղորդումը:

Սույն դեպքում, մինչդեռ, հաղորդման (Զանգվածային լրատվության միջոցներում առերևույթ հանցանքի մասին հրապարակված տեղեկությունների) ուսումնասիրությամբ պարզվել է, որ այն, ըստ էության, չի պարունակում այնպիսի տեղեկություն և դրանով չի փաստվում այնպիսի դեպք կամ գործողության կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով՝ նշված հաղորդման հիման վրա քրեական վարույթ չի նախաձեռնվել:

Մասնավորապես՝ հաղորդման մեջ նկարագրված իրադարձություններն իրենց էությամբ հիմնականում վերաբերում են բազմաշերտ իրավական հարաբերությունների, որոնց առանցքում գտնվում են՝ կառուցապատման ոլորտում ձեռնարկատիրական գործունեության իրականացման, անշարժ գույքերի օտարման և ձեռքբերման քաղաքացիաիրավական գործարքների կնքման, այդ գործընթացներին նաև՝ պետական և համայնքային պաշտոնատար անձանց ու փոխկապակցված անձանց առնչության, քաղաքաշինական և վերաբերելի թույլտվությունների ու համաձայնությունների ստացման, տեղական ինքնակառավարման մարմինների առանձին լիազորությունների իրականացման հարթությունները:

Հրապարակմամբ ներկայացված փաստական նկարագրությունը չի բացահայտում քրեական իրավունքի նորմերով պաշտպանվող հասարակական հարաբերությունների այնպիսի խախտում, որը, նկարագրված գործընթացներում առերևույթ կոռուպցիոն արարքների վերաբերյալ կասկածների ու ենթադրությունների գերագնահատմամբ, կհիմնավորեր քրեական վարույթի նախաձեռնմամբ ըստ էության քրեական հետապնդման մեկնարկը և քրեական իրավունքի տեսության ու պրակտիկայի համաձայն կարդարացներ պետության քրեաիրավական ներգործության հիշյալ միջոցի կիրառումը:

Հաղորդմամբ արձանագրված իրադարձություններին վերաբերելի փաստական տվյալները չեն հաղթահարում քրեական վարույթի նախաձեռնման համար անհրաժեշտ նվազագույն իրավական շեմը,

դրանք բովանդակում են առերևույթ հանցանքների հնարավոր կատարման վերաբերյալ կասկածներ, միաժամանակ՝ դրանց ստուգման ընթացքում առանձին հանգամանքների վերաբերյալ ձեռքբերված հակասական տվյալներ *(օրինակ՝ հաղորդմամբ ներկայացված՝ որպես զբոսայգու փարածք նկարագրված օտարված հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում երբևէ ընդգրկված չլինելու վերաբերյալ ՏԻՄ պաշտոնական գրություն և այլն)*, նաև՝ բացառապես գործարքի կողմերի փոխկապակցվածությունից բխեցվող հետևություններ, ուստի տվյալ իրավիճակում քրեադատավարական արձագանքը կհակասի քրեական իրավունքի սուբսիդիար (ultima ratio) բնույթին և դրա գործառութային նպատակին՝ հանգեցնելով հանրային իրավական հարաբերությունների անհիմն քրեականացման:

Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ հաղորդմամբ նկարագրված՝ կասկածներ պարունակող հիշյալ արարքների, այդ թվում՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցանքների առկայությունը ողջամտորեն կարող է ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգման արդյունքում, ուստի հաղորդման պատճենն ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական իրավասու վարչությանը՝ հանձնարարելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ձեռնարկել անհրաժեշտ ստուգողական գործողություններ, իսկ դրանց արդյունքներով առերևույթ հանցանքի մասին վկայող բավարար փաստեր հայտնաբերելու դեպքում՝ ներկայացնել հանցանքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված պատշաճ հաղորդում:

Առդիր՝ հաղորդումը, վերաբերելի նյութերը՝ 24 թերթ:

Հարգանքով՝

Տնտեսական գործունեության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝ ***Բ.Չիլինգարյան***